ռաջ արիւն կը գայ ջրվէթի խողովակովն, և ապա՝ ճիճուներ, որդեր կը թափեն, և կաղատուի հիւանդը։ Բայց թէ 40 օրն անցած լինի, և հիւանդը դեռն անցնելուս՝ չկարողանայ, էլ չի ազատուիլ, ըստ որում դեռի ջուրը նրան արիւնի պէս է երեւում։ Դիտեն, որ օձի կծածի դեղն է թարխունը, որ ծեծում են և փաթաթում կծած տեղի վրայ և թոյնը և ուռուցքը քաշում է. նա և զէյթունի կամ կտաւատի ձէթ խմացնել. նոյնպէս և լիմոն ուտացնել. բայց կծած տեղը պէտք է դաղել և կապել պինդ, որ ուռցքը վերեւ չգնայ, մինչեւ յիշեալ դեղերի հասնելը։ Դիտեն, որ փորի լուծը կապելու դեղն է պինտ եփած ձուն՝ վրէն սխկած մանրած գիտոր ցանած՝ առաւօտը անօթուց ուտել, կամ թունդ սեւ դայֆայ կամ թունդ (մուքը) չայ խմել։ Աւելի լաւն այն է, որ տաք ջրի մէջ նստի մի քանի անգամ հիւանդը, և մսի ջուր խմի։ Դիտեն, որ փորի կապը, պընդութիւնը քանդելու դեղն է կարագը չայով խմել, կամ իւղալի կերակրի վրայ գինի խմել. զոր օրինակ փիլաւ, ձուաղեղ, ևն. և կամ կանաչեղէն խաշել և գոլգոլ քաշել փորի վրայ և՝ իբրեւ վերջին փորձ՝ հում անեփ կաթ խմել անօթուց։ Դիտեն, որ հաղի դեղը կաթն է։ Դիտեն, որ ատամացաւի դեղը միխակի իւղն է և արաղը, որ բերանն առնի, ողողի, բաւական պահի բերանում, և եթէ ամեն դեղ ու ճարից յետոյ ցաւը չկտրի, ճար չկտուր ատամը հանել տալ։ Դիտեն, որ կոտրուած ոսկորը յառաջ պէտք է զգուշութեամբ ուղղել, դղել, դրբատել, յետոյ շրեշտը ձուի սպիտակուցով շաղախել, քաշել կտաւի վրայ, և այն կտաւով՝ կոտրած ոսկորը պինդ փաթաթել։

Վերջապէս՝ դիտեն այն ամեն ցաւոց դեղերը, որ սովորական են Շամախի քաղաքում և գիւղերում, և համարեա ամենայն Հայաստանում։

Զմոռանանք Շամախեցւոց Զալզուն, որ մի տեսակ դեղ է տկարութեան՝ մանաւանդ Մաղրասեցւոց, որ թմրած հիւանդին պար ածելով՝ խաղացնելով՝ լաւացնում են. այն է նաղարով, զուռնով այնքան պար են ածում հիւանդին, որ ուշաթափ ընկնում է դեռին, և այնպէս մի, երկու օր թմրած մնալով՝ առողջանում է հիւանդութիւնից. կան այնպիսի հիւանդներ, որ